ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/19» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

28-ը հուլիսի 2017թ.
Ժամը 11[00]

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝

ՀՀ ՊՆ աշխատակազմի ղեկավարի տեղակալ, ՔՀԾ 2-րդ դասի պետական խորհրդական Ս. Աբովյան,

գնահատողներ՝

ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության պետի տեղակալ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Մ. Խալաթյան,

ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Հ. Բաղալյան,

ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան,

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ռ.Մարդոյան:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/19» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ռ. Մարդոյան)

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2.«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/19» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4.Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/19» ծածկագրով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ռ. Մարդոյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար «Ածուխի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/19» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Հ/հ	Մասնակցի անվանում
1	Հակոբ Առաքելյան Ա/Ձ (համատեղ գործունեության միջոցով՝ «Դառես» ՍՊԸ-ի հետ)

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2 .« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Ռ. Մարդոյան)

2.1 Մասնակցի էլեկտրոնային հայտը www.armeps.am կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակցի էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 Մասնակցի հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/19» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ ընթացակարգի հրավերի N 4 հավելվածով նախատեսված՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրին համապատասխանության մասին հայտարարության, որի տեքստում բացակայում էր «Դառես» ՍՊԸ-ի անվանումը, այսինքն վերջինս որպես կոնսորցիումի անդամ չէր հավաստել հայտարարության բովանդակությունը: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրեց նիստը և առաջարկեց մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունը: Մասնակցի կողմից սահմանված ժամկետում և կարգով առկա անհամապատասխանությունը շտկվեց և ներկայացված փաստաթուղթը գնահատվեց հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Ռ. Մարդոյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Հ/հ	Գնման ենթակա ապրանքների անվանումը	Չափի միավորը	Քանակը	Նախահաշ. գինը (դրամ)	Հակոբ Առաքելյան Ա/Ձ-ի առաջարկ՝ առանց ԱԱՀ	1-ին տեղ զբաղեցնող մասնակից
1	Աճուկ	տոննա	600	54,000,000	54,000,000	Հակոբ Առաքելյան Ա/Ձ

3.2 Մասնակցի գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/: Ըստ ներկայացված տվյալների՝ մասնակիցը ԱԱՀ չի վճարում:

3.3 Քանի որ «Աճուկի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/19» ծածկագրով ընթացակարգին հայտ է ներկայացրել մեկ մասնակից, ուստի հիմք ընդունելով ընթացակարգի հրավերի 8.6 և 8.7 կետերը գնահատող հանձնաժողովը որոշեց գների նվազեցման նպատակով **08.08.2017թ. ժամը 10:30-ին** ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) անցկացել բանակցություններ: Սահմանված ժամկետին մասնակիցը բանակցություններին չներկայացավ և առաջարկված գինը թողնվեց առանց փոփոխության:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Ռ. Մարդոյան)

4.1 **10.08.2017թ** (էլեկտրոնային գնահատման արդյունքում) «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկի հիման վրա ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեց Հակոբ Առաքելյան Ա/Ձ-ն:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի***(այդ թվում՝ կոնսորցիումի անդամի)***՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի ***«Ֆինանսական միջոցներ»*** որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Ռ. Մարդոյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ռ. Մարդոյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/19» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Ս. Աբովյան
Գնահատող	Մ. Խալաթյան
Գնահատող	Հ. Բաղալյան
Գնահատող	Ա. Մաղաքյան
Գնումները համակարգող՝	Ռ. Մարդոյան